

բաժնուէր, փոխանակ արեւելք երթալու դարձաւ դէպ հիւսիս եւ մտաւ Անձեւացեաց ժայռոտ գաւառը:

Յեղիսէն անգամ մը տեսնելու փափագը որչա՛հ զօրաւոր էր սրտին մէջ այնչափ էր իրմէ փախչելու մտածութիւնն էլ, որպէսզի Նորա կեանքին մէջ դժբախտ պարագայ մը չաւելցնէ՝ իւր միտքը կը տատանէր, բայց դարձեալ սիրոյ զօրութիւնը, որ կը ձգէր զինք դէպի հիւսիս՝ դէպի Կանգուար ամուրն՝ շատ աւելի բուռն էր: Թեպէտ մեծ եւ բարձր էր սիրտը, սակայն չէր կրնար անցնիլ եւ արհամարհել տեղեկութիւն Մուշեղի՝ Անձեւացուոց իշխանին վրայ, որ կարելի էր առնուլ առանց խոյզ եւ խնդիր ընելու այդ երկրին մէջ՝ վասնզի իւր Յեղիսէի կեանքը կապուած էր Նորա կենաց:

Այսպէս կը մօտենար Նա Յոգեաց վանքի շրջակայքը, որ շատ հեռի չէր Կանգուարէ, եւ ուսկից կը Նշմարէր ամրոցին երկնաբերձ աշտարակները: Այս ահաւոր բերդը Անձեւացեաց ժայռերուն մէջ Նաեւ ամենէն անառիկ համարուած էր, Նախ որ՝ քարայրներէ ի քարայր իբրեւ թէ լաբիրինթոսի մը մէջ պէտք էր պտըտիլ հասնելու համար ահագին ժայռի մը ստորոտը, երկրորդ՝ ժայռին բարձրութեան վրայ արհեստական պարիսպներուն եւ աշտարակներուն պատճառաւ, ուր ոչ պատեթագմական հարուած եւ ոչինչ չէր հասներ հողի կտոր մը հասնելու: Եւ երրորդ միմիայն ճանապարհ կար այդ ժայռին գլուխը դրան հասնելու համար, ճանապարհ, որ թշնամուռն դեմ բազմատեսակ արգելքներ ուներ:

Այդ կետին վրայ կանգնած Գուրգէն, սրտատրոփ կը Նայէր ամրոցին. ո՛չ անոր բարձրութեան եւ ոչ շինութեանդ վրայ ապշեալ, այլ միայն անոր համար, որ Յեղիսէ այդ ամրոցին մէջ կը բնակէր եւ իրեն շատ դժուարին էր հասնիլ Նաեւ անգամ մը հետը առանձին տեսութեան համար:

Երբ այս մտածութեանց մէջ շփոթած՝ չէր կրնար որոշել թէ ո՛ր կողմն երթար, ուղղակի ամրոցը՞ թէ վանքը կամ թէ գեղերուն մէկը, որ ժայռերուն մէջ կը ծածկուէին, յանկարծ մէկ երկու հոգի տեսաւ, որ փախչելով դէպ իրեն կը վազէին եւ երբ իրեն մօտեցան «Փախի՛ր